

տաղած ալիքները մին մինի ետեւից անդադար գալիս են, ալիքն կպչում ու փշրվում. ժայռերը այդ միջոցին՝ աշտարակների նըման բարձրացած՝ աչքի են ընկնում, եւ քիչ է մնում որ նաւը կտոր կտոր անեն: Համբերութիւն, Համբերութիւն արա՛, կարծես ասող կայ իրանց: Դու չի պիտի վախենաս վերջին՝ ամենագիտարին աշխատանք ու ներդրութիւն քաշելուց ու չարչարուելուց. տեղն է, ժամանակն է, որ ամեն ոյժդ թափես ու վերջին աստիճանի զգո՛յշ պահես քեզ: Երբ որ ամեն բանի կը յաղթես, այն ժամանակ միայն կը կարողանաս հաստատ հողի վերայ ռոգ դնել: Մինչեւ մահը հաւատարիմ մնացողինն է յաղթութիւնը:

Բայց, ո՛վ իմ Աստուած, խաւար անդունդքը միշտ բաժանելու չէ ինձ իմ սրտիս համար թանկագին հոգիներից, որ այն տեղ ինձ են սպասում: — Ես նորանց էլի կը գտնեմ: Կրկնապատիկ գեղեցիկ կը լինի ինձ համար այն րոպէն, որ կը դառնամ իմ իսկական հայրենիքս: Այո՛, անշուշտ, երբ որ մի օր մեր հաւատը երանելի տեսութեան կը փոխուի, մեր յաւիտենական Հօրը գոհութիւն կը յայտնենք՝ հրճուանաց ձայներով այն բարերարութեան համար, որ նա այս աշխարհումս մեզանից ծածուկ պահեց յաւիտենական կեանքի գաղտնիքը:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՀԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

Ըստ մեծի մասին Նիշվիցի եւ Պօպէի երկասիրութիւնից քաղուածօրէն կազմած Ֆրիդրիկոս Աւտնհայմերի դասագրքից թարգմանութիւն *):

(*) Այս տեսակ ժամանակագրութիւն հայկական կեանքին վերաբերեալ գէպքերի համար ցանկալի էր որ կազմուէր ի դիւրութիւն մանաւանդ դպրոցական աշակերտների.

1. ԲՐԻՍՏՈՍԻՑ ՅԱՌԱՋ.

1500. Փիւնիկեցիք ամենահին ազգերից մէկն էին, որ պարապելով ծովային—վաճառականութիւնով՝ միւսնոյն ժամանակ հռչակուած էին Հնդկաց, Արարացւոց, Եգիպտացւոց, Եթովպացւոց և ուրիշ ազգաց հետ ունեցած կարաւանական առևտրով: Նոքա Հնդկաստանից բերումէին վաճառելու— համեմունք, ներկանիւթք, անուշահոտ ծխանելիք, պողպատ, ոսկի, ակունք, փղոսկր, երկնոս փայտ, բամբակ, մետաքս, թանկագին անկուածք և զանազան փորագրուածք:

Ճարտարութեան և վաճառականութեան արթուն ոգին պատճառ եղաւ նոցա հնարագիտութեանը. զոր օրինակ, նոքա գտան ապակին, ծիրանեգոյն ներկը, դրամը, և այլն: Եսայի մարգարէն ասումէ նոցա համար. «նոցա վաճառականները իշխաններ են, և նոցա մանրավաճառները ամենափառաւորն են երկրում»: Հաւանական է որ գրութեան տառերի գործածութիւնը Փիւնիկեցիք հաղորդած լինին Յոյներին:

1500. Կարմիր ծովի ափին գտնուած Արարները Փիւնիկեցւոց Եգիպտացւոց և այլոց միջոցաւ վաղ զարգացան.— նոցա գլխաւոր գործընէր լինել Փիւնիկեցւոց և Հնդկաց միջև յարաբերութեան միջնորդ:

1500. Նեղոսի հովտում եղած Եգիպտացւոց գլխաւոր զբաղմունքն էր առատ վարձատրող հողագործութիւնը— վարուցանքը. տուր և առի նիւթերն էին— հացաբոյսի տեսակները, կանեփ, բամբակ, թանկագին քաթան, հռչակաւոր գորգեր, եթովպացի գերիներ և այլն:

1500. Եփրատ և Տիգրիս գետերի հովտում գտնուած Բարեւիացիք՝ իրանց ճարտարութեամբ, առևտրովը, ճարտարապետութիւնով և աստեղագիտութիւնովը նշանաւոր էին: Իրանց Բարելոն մայրաքաղաքը Միջին—Ասիայի ազգերի համար հանրական տօնավաճառ էր, ուր բերումէին այն ամենը՝ ինչ որ նշանաւոր էր ժամանակին.— բամբակից, բուրդից և մետաքսից նուրբ անկուածներ, թանկագին գորգեր, հիւսուած վիրմակներ, սփռոցներ, ոսկեղէն, արծաթեղէն և գոհարեղէն զարդեր, գոյնզգոյն կաշիներ, ձուլածոյ մետաղներ, մետաղեայ հայելիներ, պողպատեայ գործիներ, արհեստական պարտէզներ և այլն:

1000. Պաղէստինի Բսրայէլացիք երկրագործ և վաճառական ժողովուրդ էին: Սողոմոն թագաւորը տուր և առի միջոցաւ սերտ յարաբերութիւն հաստատեց այդ ազգի՝ և Փիւնիկեցւոց, Արարացւոց, Եգիպտացւոց ու այլոց հետ:

888. Հիւսիսային Ափրիկէյում, Փիւնիկէի գաղթական Կարթագենացիք՝ գտնուած հետ շհետէ զօրեղանումն ծովագնացութեան,

- վաճառականութեան և Եւրոպայում հիմնած առևտրական ճիւղերովն այն աստիճան՝ որ գրգռումեն Հոռվմայեցւոց նախանձր, որոնց ձեռքով վերջապէս 146-ին Ք. յառ. կործանվումէ իրանց կարթագինէ քաղաքը:
753. Հիմնվումէ Հոռվմը, որը սրի զօրութեամբ դառնումէ մի հզօր աշխարհակալ պետութիւն:
730. Գտանվումէ Արևի ժամացոյցը, Յուդայի Աքազ թագաւորի օրերում:
700. Փոքր — Ասիայի արևմտեան եզերքում ծաղկումեն Միլիտոս, Եփեսոս, Զմիւռնիա և Փոկէա վաճառաշահ քաղաքները, որք պատկանում էին յոնիական Յոյն գաղթականներին:
610. Միլիտացի Թադէս իմաստասէրը նախագուշակումէ արեգակնային խաւարումն և ուսուցանումէ թէ երկիրս կ'որո—գնդաձեւէ:
550. Հարաւային Գաղղիայում հիմնվումէ Մասսիլիա (Մարսելի յունական գաղթաքաղաքը և շուտով մի ծաղկած վաճառատեղի է դառնում, Հաւանական է որ առաջին գաղթողները բերած լինին այդ տեղ ձիթենին և որթը:
481. Պարսիկները և Յոյները հնարումեն ամենահարկաւոր տեղերին կրակի նշանացոյցներով լուրեր հաղորդելու միջոցը:
440. Յունաստանը ծաղկում է Պարսիկներին յաղթելով, Այդ օրերից սկսած ծաղկումէ գիտութիւնը, արհեստը և վաճառականութիւնը Աթէնքում և Աորնթոսում: Փիզիաս հռչակաւոր անդրիագործը կառուցանումէ (444) Պարթէնօնը, որ էր Աթէնքում Միներվային (Հոռվմայեցւոց գիտութեան, արուեստի և յաղթութեան աստուածուհի) նուիրած տաճարը:
- 332 Տիւրոսը կործանվում է Ալէքսանդր-Մեծի ձեռքով և Եգիպտոսում հիմնվումէ Ալէքսանդրիա քաղաքը՝ որ դառնումէ համաշխարհային վաճառաստան:
240. Եսիբոս Ալէքսանդրացին հնարումէ ջրային ժամացոյցը՝ նորան են վերագրում ջրհանի և հրշէջի գիւտն ևս:
212. Սիրակուսան, որ Պարթագէնացւոց մի հարուստ վաճառաստանն էր Սիկիլեայում, կործանվումէ Հոռվմայեցւոց ձեռքով այդ կործանման ժամին մի երևելի գիւտի վերայ մտածելիս Հոռվմայեցիներից սպանուեց Արքիմեդէսը՝ որ գտաւ ջրային պտուտակը, լծակը, ճախարակը և կորստեան այն օրէնքը՝ որ մարմինը ունենումէ ջրի մէջ եղած միջոցին:
210. Հէրօն Ալէքսանդրացին հնարումէ Հողմային կաթսան (փնդկեսսել) և գտնումէ լծակի մանր երեղթները:
200. Բամիլակեայ թուղթն է գտնվում 2ինաստանում:
146. Հոռվմայեցիք կործանումեն Պարթագէնն ու Աորնթոսը և դորանով ահագին ցնցումն են տալի համաշխարհային վաճառականութեան:

Այլ մեծամեծ կողոպտումների առթիւ Հռովմայեցի պատրիցիաներից ոմանք ճոխանում փարթամանում են, ահագին հարստութիւններն ձեռք բերում, իսկ ռամիկը (պլեբէեր) համեմատաբար աղքատանում է և տկարանում: Հռովմայեցի կայսրները շինում են տիրած երկրներում յարակցութեան ճանապարհներ և դորանով դիւրացնում են ազգաց հաղորդակցութիւնները:

2. Ինքնագրային:

52. Հիմնվում է Լոնդոնը: Այս քաղաքը ծաղկում է արագաբայլ և դառնում է անուանի վաճառաստան:
70. Կործանվում է Երուսաղէմը և ամենայն տեղ ընկնում է Հրէից իշխանութիւնը:
300. Հռէնոսի (վորմա և Կորլենց քաղաքներում) և Մօզելի վերայ (Տրիերում) Հռովմայեցիք խաղաղի որթ են տնկում և մշակում են գինին:
375. Ազգաց արշաւանաց սկիզբն, որով և վաճառականական հաղորդակցութեանց ընդհատումն:
500. Կոնստանտինոպօլը: Յունաց կայսրների նոր մայրաքաղաքը դառնում է գլխաւոր տօնավաճառ արեւելեան և արեւմտեան ապրանքների համար:
528. Յուստինիանոս կայսրը հռովմայական օրէնքները ժողովել է տալիս և «Corpus juris» անունով մի գրքի մէջ ամփոփած հրատարակել է տալիս, որ այժմ ևս իբրեւ հիմն հռովմէական իրաւագիտութեան յարգի է:
536. Առաջին ջրաղացը Տիրեք գետի վերայ շինում է Բէլիսարը, երբ Հռովմի մէջ Դոթագիներից պաշարվում է:
554. Առաջին անգամ եկեղեցական զանգակները հանդէս են բերվում Հօլայում՝ որ Կամպանիա գաւառումն է և 11-րդ դարում այդ զանգակների գործածութիւնը դառնում է հանրական:
555. Շերամի որդը Յուստինիանոսի օրով բերվում է 2ինաստանից Յունաստան, և մետաքսագործութիւնը մշակվում է Կոնստանտինոպօլում, Աթէնքում և Կորնթոսում:
640. Դամասկոսը հռչակվում է իւր բամբակի և մետաքսի, նաև իւր զէնքերի (թուր) գործարաններով:
650. Բրինձը և շաքարեղէգն փոխանցվում են անդկաստանից Եգիպտոս:
711. Արաբացիք (Մաւրերը) բնակվում են Սպանիայում: Նոյցա ձեռքով ծաղկում են գիտութիւնները, արհեստները, դաշտային և լեռնային մշակութիւնը, ճարտարագիտութիւնը և վաճառագիտութիւնը մինչև որ քրիստոնեայք դուրս են քշում նոցա այդ երկրից:

757. Առաջին երգեհոնը (orgel) հնարվում է Յուդաստանում և Վին-
չեստրի մայր եկեղեցին մինչև ստանում է 951-ին:
843. Փրանկֆուրդում (Մայն գետի վերայ) առաջին տօնաժամը.
(երկրորդը՝ 1330-ին):
- 919—936. Գերմանեայում Հենրիկոս կայսրը հիմնում է քաղաքա-
ցիութեան իրաւունքը, Իրաւանց ապահովութեան առթիւ
բարձրանում է ճարտարութեան եռանդը, վաճառականութիւնը,
ճոխութիւնը, բարեկեցութիւնը և մտաւոր զարգացումն:
960. Գերմանացի բուրգ մանողները գնում են Գենտ քաղաքը և
բրդագործութեան արհեստը ծաղկեցնում:
983. Ապակենկարի առաջին նշմարանքը երևում է Տիգերնշէյում.
Այս արհեստը նշանակութեան և կատարելագործութեան կող-
մից հետ զհետէ զարգանում է մինչև Միջին—Դարու վերջերը:
Ուլմի և Փրայբուրգի մայր եկեղեցիների և Սերալդուս ու Լորից
եկեղեցիների լուսամուտների ապակիները օրինակ են այն ժամա-
նակուայ նկարչութեան կատարելութեանը:
996. Գերբերտ արքեպիսկոպոս, որ յետոյ պապական գահը նստելով կոչուեց
Սիլվեստր II հնարեց զանգակաւոր ժամացոյցը:
1000. Վենետիկ, Գենուա, Պիզա, Ռափեննա, Լիմաֆի իտալական քա-
ղաքները ծաղկում են Արևելքի հետ ունեցած վաճառականութիւ-
նով, իսկ մի և նոյն միջոցին Մայլանդ, Ֆլորենցիա, Սիվա, Լուկ-
կա, Բօլոնիա և այլն, ճարտարութեան մէջ հարստանում և հզո-
րանում են:
1000. Ֆլանդրեայում և Շամպայնում վաճառականական յարաբե-
րութիւնը տօնավաճառին կենդանութիւն է տալիս:
1010. Գուրգո ֆօն Արիցցօ հնարում է երգեհոնի ձայնական ներդաշ-
նակութիւնը և այդու առաջէգալիս դաշնամուրը 13-րդ
դարում:
1079. Առաջին յիշատակութիւն գայլուկ բոյսի, որպէս յաւելուած
գարեջրին, Ս. Հիլէգարդիսի մի դրուածքում, որ էր մայրապետ
Ռուպերտսբերգի (վանք) Հոգենոսի վերայ:
1100. Իտալական քաղաքները խաչակիր արշաւանքների միջոցաւ մեծա-
պէս ընդարձակում են իրանց վաճառականութիւնը դէպի Արևելք
և առանձինն՝ Վենետիկ քաղաքը զարգանում է այդ մասին:
- 1104—1106. Վորմս քաղաքում ձկնորսները և Մագգէբուրգում չինա-
գործները հիմնում են ճարտարութեան — միութիւն կո-
չուած ընկերութիւնը:
1105. Այս թուին առաջին անգամ յիշատակութիւն կայ հողմաղա-
ցի մասին:
1150. Շերամատածութիւն և մետաքսագործութիւն Սի-
կիլեայում:

1150. Հիմնվում է առաջին բանկը և գործնով էլ հեշտացնում է վաճառականական գործը նախ Անենտիկում Հայնեի ձեռքով, ապա Գենուպում։
1150. Այս միջոցին պետք է հնարում լինի զառամն (Destiliren)։
1153. Առաջին անգամ յիշվում են աշտարակաց ժամացույցները։
1180. Անգղիայում մեծատունները ապակիի լուսամուտներ են գործածում։
1190. Առաջին տուն վաճառքը Լայպցիգում։
1290. Մասս գետի քարածուխով և հրահալիչով առատ ծոցերը մշակվում են եռանդով, նոյնպես Գալիցիայի Ալիցկայ կոչում տեղի հարուստ աղաք արահանքն է մշակվում։
1200. Աերակենդանանում են գիտութիւնները և արհեստները համալսարաններ ընդամենը, ինչպես Սալերնո, Պալիա, Բոլոնիա, Սալամանկա—Պարիզ, և Օքսֆորդ քաղաքներում։
- 1211—1400. Կառուցումն վանքերի և մայր եկեղեցիների Գերմանիայում. Մագդեբուրգում (1211), Անոլնում (1248), Ռեգենսբուրգում (1275), Ֆրայբուրգ ի Բրայսգաու (1300), Ս. Ստեփաննոսի մայր եկեղեցին Աիննայում (1359), Ուլմ (1377) և այլն։
1213. Առաջին նաւագնացութեան դպրոց Մայորկայի վրայ, որ իսպանական նաւատորմի զարգացման առիթ եղաւ։
1230. Առաջին փոխանակագիր Ֆլորենտինացուց մէջ, Փոխանակագրի օրէնքը մշակվում զարգանում է, հուսկ յետոյ և կատարելութեան է հասնում նախ 16-րդ դարում։
1241. Համբուրգ և Լիւբեկ դաշն են կապում ծովի և ցամաքի վրայ թշնամական արշաւանքները յետ մղելու, որ և կարելի է համարել սկիզբն մեծ Հանդայի, Հանդան հասնում է իւր ծաղկեալ դրութեան 1450, վասն զի այդ ժամանակ այդ մեծ միութեանը դաշնակից էին ութսուն քաղաքներ, չհաշուած մերձաւոր դաշնակիցները։
1248. Առաջին անգամ յիշվում է Բազելի մսագործների դասակարգը։
1250. Բարցելոնեայի ծովային օրէնքը նշանակութիւն և ոյժ է ըստանում նախ Միջերկրական ծովի վրայ։
1256. Հնագոյն հացահանդեսն է Բազիլեայում։
1272. Բորգեսսանօն հնարում է Բօլօնիայում մետաքսի վիլակ, վլին (ճախարակ) բօթօթի (բարամի) վրայից թելը քաշելու համար։
1279. Առաջին անգամն է յիշվում ապակիի հայելին։
1280. Ալեքսանդր դը—Սպինան հնարում է ակնոցը։
1295. Մարկո Պօլօն դէպի 2ինաստան արած ճանապարհորդութիւնից վերադառնում է իւր հայրենի քաղաքը՝ Անենտիկ և ժողոված

տեղեկութիւններով նորից զարթեցնում է շահախնդիր ոգին Ասիայի հարուստ երկրների մասին, որով զնուակէ Վենետիկի, Գերմանիայի և Գերմանական Հանգալի զօրութեան ու հարստութեան հիմք:

$$\left(\frac{G}{\Gamma} = \frac{\mu}{\Gamma} = \frac{1}{2} \right) .$$

(B-7f) U. R_Ll - wawp hwa ng.

Ս. Է. ԶՄԻՆՈՒՆԻ ԱՐԽԻԻ.

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԻ ՄԱՀԸ ԵՒ ՄԱՏԹԵՈՍԻ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ *)

1857 թուի Փետրվարի 12 ին Ներսէս բոլորովին առողջ էր, գեռ 13 ի առաւօտը չողջունած՝ Թիֆլիզի հայ եկեղեցիները տխուր զանգակահարութեամբ գովաւումն Հայրապետի մահը: Ներսէս Կաթողիկոս 13 ի առաւօտեան պահուն կնքումէ իւր մահկանացուն: Կոնստատոքը անմիջապէս իւր անդամոյ, ոստիկանական աստիճանաւորի (պրիստաւ) եւ Սինոդի անդամ Սարգիս Արքեպիսկոպոսի ներկայութեամբ հանգուցեալ Հայրապետի իրեղէնները ժողովելով մի սենեկի մէջ կողպում ու կնքում է իւր եւ ներկայ գանուողների կնիքներով: Հանգուցելոյ մարմինը վայելուչ դագաղի մէջ ամփոփելով, դնումէ վանքի մայր եկեղեցում եւ պատուիրումէ Թիֆլիզի բոլոր հայ քահանաներին բացի վերահաս մեծի պահոց օրերից՝ ամեն օր պատարագել: Կոնստատոքը այս կարգադրութիւնները անելուց յետոյ հենց նոյն օրը յայտարարութեամբ Հայրապետի մահուան գոյժը հազարգումէ Սինոդին, այս յայտարարութեան մէջ Ներսէսի տարիքը 95 է գրուած:

Սինոդը կաթողիկոսի մահուան գոյժը ընդունելուց յետոյ՝ Փետրվարի 16-ին գրութեամբ խնդրելով Կողկասեան փոխար- քայի հաճութիւնը, Հանգ. Կաթողիկոսի մարմինը Ս. Էջմիա-

(*) Տեղեկութիւնները քաղուած են 'ներսէսի մահուան և Մատթէոսի ընտրութեան համար Սինոդի № 17 գործից' որ սկսուած է 1857 թուի Փետրվարի 15-ից և վերջացած է 1864 թուի Սեպտեմբրի 30-ին: